«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Բուլինգի դրսևորումները և կանխարգելումը դպրոցում

Առարկա՝ Տարրական դասարաններ (դասվարներ)

Ուսուցիչ՝ **Կարինե Քոչարյան**

Դպրոց՝ Երևանի «Արգենտինյան Հանրապետություն » հ. 76 հիմնական դպրոց
Ղեկավար՝ Աիդա Խալաթյան

Երևան 2023թ.

Բովանդակություն

Ներածություն 3
1. Բուլինգի էությունը և տեսակները 5
2.Դպրոցական բուլինգի առաջացման պատճառները 9
3. Բուլինգի երևույթի հետևանքները, դրսևորման մեխանիզմները և դրանց կարգավորման մեթոդները 12
Օգտագործված գրականության ցանկ 17

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Երեխայի նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական ահաբեկումը խմբի կողմից, որը հասցնում է զոհին ֆիզիկական և էմոցիոնալ վնաս, անվանվում է«Բուլինգ»: Ահաբեկումը վերաբերում է բռնի և վախեցնող վարքի տեսակին,որը դպրոցական փուլում իրականացվում է բանավոր, ֆիզիկապես կամ հոգեբանական ճնշման միջոցով: Ընդ որում, հոգեբանները պնդում են, որ աղջիկների կողմից բուլինգի արտահայտումն անհամեմատ վտանգավոր է:

Անգլալեզու գրականության մեջ «Բուլինգ» տերմինը ստացել է լայն տարածում՝ դրանով նկարագրում են համադասարանցիների խմբի կողմից երեխայի նկատմամբ կիրառվող ֆիզիկական կամ հոգեբանական ահաբեկումը: Բուլինգը կարող է լինել ֆիզիկական (հրել, մազերից քաշել, ծեծել), վերբալ (ձեռք առնել, ծաղրել) կամ սոցիալական (բոյկոտ ,երեխայի մեկուսացում):

Ըստ իս, դպրոցական բուլինգի պատճառը ծաղրողի՝ բուլի հոգեկան խնդիրներն են: Բուլը կամքով թույլ է իրեն բարձր է զգում միայն երբ ծաղրում է ուրիշներին, դա իրեն դարձնում է«լավագույնը» հասակակիցների շրջանում:

Այն երեխաները, ովքեր լինում են բուլինգի նախաձեռնողներ, շարունակում են իրենց ագրեսիայի դրսևորումները նաև մեծ տարիքում՝ հաճախ նրանք կանգնում են հանցագործությունների ճանապարհին: Հակառակ նշվածիս, բուլինգի զոհերի մոտ, ովքեր զգացել են վիրավորանքի դառնությունը, հաճախ ոչ միայն դա պահպանվում է բավականին երկար ժամանակահատված, այլև առաջացնում է հիասթափություն կյանքի նկատմամբ:

Տվյալ հետազոտական աշխատանքի արդիականությունը կայանում է նրանում, որ այսօր վիճաբանությունը դասընկերների միջև, նվաստացումը, ծաղրը՝ դպրոցականների կյանքի անբաժանելի մի մասն են դարձել: Շատ գիտնականներ սկսել են ուսումնասիրել բուլինգը լայնորեն: Շատ երկրներում նույնիսկ հակաբուլինգյան ծրագրեր են ստեղծվել: Մեր երկրում խնդիրը կանխելու նպատակով, ցավոք, լայնածավալ աշխատանքներ չեն տարվում : Ցանկանում եմ

նշել, որ տվյալ բացասական երևույթը բացառելու նպատակով հարկավոր է լուրջ աշխատանք ծավալել թե՛ սովորողների, թե՛ երեխաների ծնողների շրջանում:

Հայաստանում չկան վիճակագրական տվյալներ այն մասին, թե դպրոցում ուսումնական տարվա կտրվածքով քանի երեխա է հասակակցի կողմից ենթարկվում բուլինգի: Այն հաճախ չի դիտարկվում որպես խնդիր, այլ համարվում է նորմալ երևույթ: Ավելին, հաճախ բռնության դրսևորումները չեն հակադարձվում՝ քողարկելով իրական խնդիրը և բարդելով այն դեռահասության ճգնաժամի ու հույզերի չկառավարման վրա: Մինչդեռ երևույթը կա, և դեռևս ուշադրություն չի դարձվում այդ խնդրին, չեն թիրախավորվում այն խմբերը, որոնք հաճախ են բուլինգի զոհ դառնում:

Հետազոտության նպատակն է: Հետազոտական աշխատանքը նպատակաուղղված է ուսումնասիրել բուլինգի դրսևորումները դպրոցական տարիքում, դրանց հոգեբանական սկզբունքները, հետևանքներն ու դրանց ազդեցությունը:

Հետազոտության խնդիրներն են.

1.Ուսումնասիրել համապատասխան գրականություն:

2.Բացահայտել բուլլինգի տարածման պատճառները դպրոցական համակարգում:

Հետազոտության օբյեկտն է: Բուլինգի դրսևորումները դպրոցական տարիքում, դրանց հոգեբանական սկզբունքները:

Հետազոտության առարկան է: Բուլինգի բացասական ազդեցությունը դպրոցահասակ երեխաների և դեռահասների զարգացման վրա:

1. Բուլինգի էությունը և տեսակները

Բուլինգը շատ երկրներում սկսել են ուսումնասիրել դեռ 20-րդ դարի 70-ական թվականներին, սակայն այսօր էլ այն չի կորցրել իր արդիականությունը: Ըստ շատ հետազոտողների, Բուլինգը ներառում է չորս հիմնական բաղադրիչ՝ագրեսիվ եւ բացասական վարք, կանխամտածվածություն, անհավասարակշռություն մասնակիցների հարաբերություններում, կանոնավորության իրականացում: Բուլինգը սոցիալական երևույթ է, հիմնականում կազմակերպված մանկական խմբերում, առաջին հերթին՝ դպրոցում:

Այս տերմինը առաջ է եկել մեծահասակների կոլեկտիվում՝ հետազոտությունների արդյունքում: Բայց հետագայում պարզվեց, որ հալածանքը սփռված է ամենուր՝ զինվորական համակարգից մինչև էլիտար քոլեջներ: Առաջին հրապարակումներն այս թեմայի վերաբերյալ, առաջ են եկել շատ վաղուց: Դյուկը իր առաջին աշխատանքը բուլինգի մասին հրապարակել է դեռ 1905 թվականին: Բայց այս ոլորտում առաջին գաղափարը բուլինգի մասին տվել է Դ. Օլվեուսուն 1993 թվականին <<Բուլինգը՝ հալածանքի դիտավորյալ կանոնավոր ագրեսիվ դրսևորում է, որն իրականացվում է սոցիալական անհավասար միջավայրում ֆիզիկական ոժի միջոցով»[1]:

Բոլոր ժամանակներում էլ ահաբեկման դրսևորումներ են նկատվել, պարզապես մերօրյա պայմաններում այն բոլորովին նոր որակ ու դրսևորումներ է ձեռք բերել: Բուլինգը, ի տարբերություն առօրյա բախումների, պարբերական բնույթ ունեցող, դիմացինին հոգեբանական ու ֆիզիկական վնաս պատճառելու միտում հետապնդող բացասական երևույթ է[2]:

Երբեմն բուլինգն ու կոնֆլիկտը շփոթում են՝ դիտարկելով որպես հոմանիշներ, բացասական երևույթի դրսևորում[3], մինչդեռ մասնագիտական գրականության մեջ տարբերում ենք կոնֆլիկտի 2 տեսակ՝ կառուցողական ու ապակառուցողական: Ավելին, կառուցողական կոնֆլիկտի առկայությունը համարվում է ցանկալի, քանզի

---

[1] Бочавер А. А., Жилинская А. В., Школьная травля и позиция учителей//Социальная психология и общество, Т. 6, N 1, 2015. , էջ 103-113

[2]Дахин А. Н., Буллинг в школе и не только..., Сибирский педагогический журнал, N6, 2015, , էջ 208

[3] Борисова Л. Г., Мониторинг школьных конфликтов: причины, выводы, рекомендации//Педагогические технологии, 2005, N 1, էջ 57-71

«այս դեպքում կոնֆլիկտների զարգացումն ուղեկցվում է տեղեկատվության առավել արդյունավետ ու արագ փոխանակմամբ, տարբեր դիրքորոշումների համաձայնեցվածությամբ, փոխադարձաբար միմյանց հասկանալու ցանկությամբ»[4]: «Կոնֆլիկտը որոշակի ժամանակահատվածում դառնում է անխուսափելի և չի կարող ամբողջությամբ վերանալ»[5], մինչդեռ բուլինգը թիրախավորված ճնշման ձև է, որը չի ենթադրում ինքնին դրական աճ և միանշանակորեն բացասաբար է ազդում երեխայի հոգեկան զարգացման վրա: Բուլինգն անձի նկատմամբ կիրառվող ագրեսիվ վարքն է՝ հետապնդումը, հոգեբանական տեռորը, բռնությունը, հեգնանքը, ծաղրանքը: Այն կարող է տեղի ունենալ ցանկացած խմբում, բայց առավել վտանգավոր է դպրոցականների շրջանում:Բուլինգի զոհը չի կարողանում իրեն պաշտպանել, ինչի հետևանքով էլ բռնարարի կողմից ընտրվում է որպես զոհ : Բուլինգի զոհ դառնալը կապված է երեխաների դաստիարակությունից,ընտանեկան մթնոլորտից,որը անկասկած անդրադառնում է երեխայի ինքնագնահատականի ձևավորման վրա: Հիմնականում բուլինգի զոհ են դառնում շրջապատում իրենց տեղը ոչ ամբողջությամբ գտած անձինք, որոնք ինչ-որ առումներով խոցելի են կամ ունեն որոշակի թերություններ: Հիմնականում այս երեխաները ներփակված են իրենց ապրումներով, չեն հաղորդակցվում շրջապատի հետ:

Բուլինգը չի սահմանափակվում զոհի ու ագրեսորի դերերով: Բուլինգի գործընթացում առանձնացվում է չորս դեր՝ ագրեսոր, մասնակից, դիտորդ և պաշտպան: Հատկապես առանձնացվում է դիտորդի դերը, առանց որի ներկայության սովորաբար բուլինգ տեղի չի ունենում: Մասնավորապես, երբ գործ ունենք ծաղր պարունակող հոգեբանական ճնշման իրավիճակի հետ, կարող ենք փաստել, որ այլ անձի ներկայությունը ծաղրողի համար լինում է խիստ ցանկալի: Այդ անձը կարող է պասիվ դիտորդի դերում հանդես գալ, բայց և միաժամանակ նպաստել բացասական վարքի դրսևորմանը: Դիտորդ երեխաները հաճախ վախենում են զոհ դառնալուց կամ առանձին դեպքերում զվարճալի են համարում բուլինգի

[4] Խաչատրյան Ռ., Կարաբեկյան Ս., Բուդաղյան Ա. և ուրիշներ, Մարդկային ռեսուսների կառավարումը բարձրագույն ուսումնական հաստատություններում, Երևան, 2015, էջ 479
[5] Armstrong M., 2012. Armstrong's Handbook of Human Resource Management Praktice.-12th ed., UK:KoganPage, էջ 586

տեսարանը, փորձում լավ հարաբերություններ ունենալ բուլերի հետ՝ վախենալով դառնալ հերթական զոհը:

Ըստ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի 2018թ. հրապարակած տվյալների՝ աշխարհում 13-15 տարեկան երեխաների գրեթե կեսը՝ շուրջ 150 միլիոն երեխա, դպրոցում կամ դպրոցի տարածքում ենթարկվել է բռնության: 2019թ. հուլիսի 25-ին Հայաստանում «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ մեկտեղ կազմակերպել է երեխաների մասնակցությամբ «Երեխաների նկատմամբ բռնության կանխարգելման և արձագանքման գործողությունները» խորագրով քննարկում, որի ընթացքում երեխաները բարձրաձայնել են խնդրի հետ կապված իրենց պատկերացումները, մշակել, ներկայացրել առաջարկություններ և թե ինչ գործողություններ կձեռնարկեն բռնության կանխարգելման, բռնությունից տուժած երեխաներին օգնելու համար՝ կարևորելով պետության, հասարակության արձագանքը երևույթի նկատմամբ:

Տարբերում ենք բուլինգի տարբեր դրսևորումներ՝

- **Ֆիզիկական**/ հարվածել, հրել, վնասել/,
- **Խոսքային**/ծաղրել, պիտակավորել, սպառնալ, վիրավորել,
- **հոգեբանական կամ սոցիալական՝**/ դիտավորյալ խմբից վտարել կամ մեկուսացնել, վարկաբեկել, վախեցնել/,
- **սեռական՝**/ բռնի գործողություններ, հարձակումներ/,
- **կիբեր՝** /կիբերսադրանք՝ տեքստային հաղորդագրություններ, սպառնալիքներ, անպարկեշտ նկարների տեղադրում համացանցում և այլն/:

Բուլինգի շարժառիթները տարբեր են, որոնց թվին կարող ենք դասել ինքնահաստատվելը, դրական տպավորություն թողնելը, ուժեղ երևալը և այլն, որոնք տարիքային տարբեր շրջաններում տարբեր դրսևորումներ են ունենում: Խոսքը հիմնականում այն երեխաների մասին է (բուլեր), որոնք մշտապես ձգտում են ուրիշների հանդեպ իշխանություն կամ վերահսկողություն ձեռք բերել: Բուլերը հիմնականում այն ընտանիքներից են, որտեղ հաճախ են կիրառվում ֆիզիկական պատիժներ, նրանց ծնողները դաստիարակում են պնդելով, որ ցանկացած խնդիր

լուծվում է ուժի, բռնության միջոցով:

Բուլինգի երևույթին մենք կարող ենք բախվել ամենուր՝ թե՛ ընտանիքում, թե՛ ընկերական շրջապատում, բակում, թե՛ առցանց տիրույթում: Սակայն «դպրոց» սոցիալական ինստիտուտում այն առավել նկատելի է և հաճախադեպ: Բուլինգի ենթարկվող երեխան վախ է ձեռք բերում դպրոցի հանդեպ, նրանք համարում են դպրոցը «ոչ ապահով վայր» : Անձի ձևավորման և սոցիալականացման գործում անժխտելի է դպրոցի դերը, որը վճռորոշ նշանակություն ունի նրա հետագա զարգացման ու հասարակություն ինտեգրման գործում: Հետևապես, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նմանօրինակ դեպքերին և թույլ չտալ բացասական զարգացում:

2.Դպրոցական բուլինգի առաջացման պատճառները

Այս հարցը մինչ օրս էլ մնում է չլուծված: Ենթադրաբար, բացահայտվել են մի քանի խոշոր խնդիրներ: Բուլինգի զոհ են դառնում այն երեխաները կամ երիտասարդները, ովքեր բնութագրվում են հնազանդ լինելով, դժվարությամբ պաշտպանվելով, ցածր ինքնագնահատականով կամ տարբերվում են իրենց հասակակիցներից: Նրանցից շատերը ոչ ապահովված ընտանիքներից են ,երբեմն նաև ծնողազուրկ, հետևաբաև, նրանք շատ խոցելի են:

Բռնության զոհերը հաճախ առանձնանում են զգայունությամբ, անհանգստությամբ, հակված են լացի, ֆիզիկապես թույլ են, ունեն քիչ ընկերներ:

Տիպիկ բռնության զոհ է այն երեխան, ով իր մասին բացասական կարծիքի է և ունի սոցիալական խնդիրներ: Այս հատկանիշները կարող են լինել որպես հետեւանք բուլինգի առաջացման եւ նրա նախադրյալներից՝ "ազդակներ» այն երեխաների համար, ովքեր հեշտությամբ դառնում են զոհ:

Իսկ «հետապնդողները»/բուլերը/ արտահայտում են բռնության պատրաստակամություն, ինքնահաստատման եւ իմպուլսիվության համար նրանք կարող են հեշտությամբ զգալ վրդովմունքը, դժվարությամբ են հետեւում կանոններին, ցույց են տալիս կոպտություն եւ չեն խղճում իրենց «զոհերին», ագրեսիվ են ուրիշների նկատմամբ: Սիրում են կառավարել, ցավ պատճառել ուրիշներին և պարգևատրվել ֆինանսապես /գումար,ծխախոտ/, կամ հոգեբանական-հեղինակություն սոցիալական կարգավիճակ ունենալ:

Հիմնվելով մի շարք հետազոտությունների վրա (Глазырина Л. А., Костенко М. А., Епоян Т. А., Лопуга Е. В.)՝ առանձնացվում են վարքագծային դրսևորումներ ու խառնվածքներ, որոնք հակված են հալածող (բուլեր) դառնալու[6]: Հետևապես սրանք այն դեռահասներն են, որոնք.

- ֆիզիկապես ուժեղ են և ինքնահաստատումից ելնելով հաճախ են դիմում բուլինգի,
- ռիսկի խմբում են,

[6] Предотвращение насилия в образовательных организациях, Информационно-методическое пособие для руководителей и педагогических работников образовательных организаций, Барнаул, 2017, էջ 21-22

- ունեն վարքային շեղումներ,
- պարբերաբար ուշադրության կենտրոնում գտնվելու ցանկություն ունեն և այլն:

Հարկ է նշել, որ բուլինգի զոհ կարող են դառնալ ոչ միայն առողջ հասակակիցները, որոնք ինքնավստահ չեն, ինքնամփոփ են, խուսափում են շփումներից, զգայուն են, այլև առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողները (մտավոր, ֆիզիկական կամ լեզվական արատ ունեցողները՝ ոնգախոս, կակազող և այլն), դասարանում նորեկները և այլն: Ուստի ուսուցչի, սոցիալական մանկավարժի խնդիրն է մեծ աշխատանք տանել նաև բուլինգի ենթարկված երեխաների հետ: Նրանց անհրաժեշտ է օգնել ինքնահարգանք ձեռք բերելու, իրենց նկատմամբ նվաստացում թույլ չտալու գործում, լինել ինքնավստահ, ձևավորել կամային ուժեղ որակներ[7]:

21-րդ դարում լայն տարածում է գտել նաև կիբերբուլինգի (համացանց, բջջային հեռախոս, էլեկտրոնային փոստերի միջոցով) երևույթը, որը նույնպես հղի է բացասական վտանգավոր հետևանքներով՝ հոգեբանական անդառնալի հետք թողնելով երեխայի վրա: Կիբերբուլինգի օրինակները ևս բազմազան են և ամենևին չեն զիջում վերը նշվածին թե՛ քանակապես, թե՛ թողած բացասական հետևանքներով: Այն տարբեր դրդապատճառների հիման վրա զարգացող երևույթ է, որը սկսվում է առաջին հայացքից անվտանգ թվացող կատակներից ու վերջանում հոգեբանական անդառնալի հետևանքներով: Խնդրի բարդությունը հատկապես նրանում է, որ վերոնշյալ բացասական երևույթը տեղափոխվում է վիրտուալ դաշտ՝ դուրս գալով վերահսկողությունից: Իրականում կիբերբուլինգն ավելի վտանգավոր է, որովհետև սահմաններ չի ճանաչում: Այնուամենայնիվ, եթե չենք կարող պայքարել կիբերբուլինգի դեմ, ապա գոնե համատեղ աշխատանքով դպրոցահասակ երեխաներին կարող ենք ճիշտ ուղի ցույց տալ[8]: Վերոնշյալ բացասական երևույթը, ագրեսիան կանխարգելելու գործում մեծ դեր ունեն

[7]Бочавер А. А., Жилинская А. В., Школьная травля и позиция учителей//Социальная психология и общество, Т. 6, N 1, 2015. , էջ 103-113

[8] Бочавер А. А., Хломов К. Д., Кибербуллинг: травля в пространстве современных технологий//Психология. Журнал высшей школы экономики, Т. 11, N3,, էջ 177-191

ուսուցիչները, ինչպես նաև ծնող-ուսուցիչ հարաբերությունները: Ուսուցչի վճռական դերն այն է, որ վստահության վրա հիմնված հարաբերություններ կառուցի բոլոր աշակերտների հետ, նրանց պահվածքում նկատելի բացասական դրսևորումների առկայության դեպքում նրբանկատորեն հատուկ քայլեր ձեռնարկի իրավիճակը շտկելու համար: Ոչ պակաս կարևոր է նաև սովորողների ինքնագնահատականը, որն ուղեկցվում է հետևյալ ցուցանիշներով.

- սեփական հնարավորությունների ու կարողությունների իրատեսական ընկալում՝ առանց գերագնահատման և թերագնահատման,
- սեփական անձի հանդեպ որոշակի վստահության ձեռքբերում,
- ձգտումների ու նպատակին հասնելու քայլերի կանխատեսում, իրականացման հնարավորությունների իրատեսական ընկալում և այլն:

Բուլինգն իրականացնողներից են նաև «ականատեսները» և «հանցակիցները»: Նրանց թիվը բավականին մեծ է լինում: Չնայած շատերն են խղճում <զոհերին>, քչերն են օգնության ձեռք մեկնում:

Չնայած նրան, որ «ականատեսների» արձագանքը շատ կարեւոր է, քանզի նրանք են հանդիսանում մի տեսակ «լակմուսի թուղթ» այն ամենին, ինչ կատարվում է: Միեւնույն ժամանակ, նրանք ունեն սոցիալական երկընտրանք՝ պետք է փորձեն կանգնեցնել հալածանքը կամ շարունակեն աջակցել « բուլին», այդպիսով՝ ապահովելով սեփական անվտանգությունը:Հաճախ «ականատեսները» և « հանցակիցները», ելնելով վախի, անօգնական լինելու , ամոթի զգացումից, միանում են ագրեսորին/բուլին/, աջակցում նրա ծավալած գործունեությանը:

Բուլինգը ցանկացած համայնքում վատացնում է սոցիալական մթնոլորտը, նպաստելով «լուռ մեծամասնության» թվի աճին:

3. Բուլինգի երևույթի հետևանքները, դրսևորման մեխանիզմները և դրանց կարգավորման մեթոդները

Դպրոցական բռնությունը երեխաների վրա ներգործում է ուղիղ և միջնորդավորված կերպով:

Ուղղակի բուլինգի դեպքում դրսևորվում են վարքային ձևերը՝հարվածել, ծեծել,ծաղրել, վիրավորել…:

Անուղղակի բուլինգի դեպքում զոհին մեկուսացնում են իր միջավայրից՝ ընկերներից: Երկուսն էլ հանգեցնում են մարդու ֆիզիկական և հոգեբանական ճնշվածության:

Առաջին հերթին, ***խանգարվում են ընկերային հարաբերությունները:*** Դպրոցական երկարատև ծաղրուծանակները ներգործում են երեխայի« Ես»-ի վրա, իջնում է նրա ինքնագնա հատականը: Երեխան սկսում է խուսափել մարդկանց հետ նոր հարաբերություններ կառուցելուց: Հաճախ պատահում է նաև հակառակը՝ մյուս երեխաները ևս խուսափում են բռնության զոհերի հետ ընկերություն անելուց. նրանք վախենում են, որ իրենք էլ զոհ կդառնան: Արդյունքում զոհի համար ընկերական հարաբերությունների ձևավորումը խնդրահարույց է դառնում, քանի որ դպրոցում մերժված լինելը հաճախ տարածվում է նաև սոցիալական հարաբերություններիվրա այլ ոլորտներում: Չի բացառվում, որ նման երեխան հետագայում ապրի ”անհաջողակի ծրագրավորմամբ”:

Երկրորդ՝ ***զոհը խմբում ցածր կարգավիճակ է ունենում,*** ինչը ուսման մեջ և վարքագծում խնդիրների պատճառ է հանդիսանում: Նման երեխաների մոտ բարձր է նյարդահոգեկան և վարքային խանգարումների զարգացման հավանականությունը: Դպրոցական բռնության զոհերին բնութագրական են նյարդային խանգարումները, ընկճախտը, քնի և ախորժակի խանգարումները, անհանգստությունը, գլխացավը քայքայիչ մտքերը:

Վատթարագույն դեպքում կարող է ձևավորվել հետտրավմատիկ սթրեսային խանգարում:

Երրորդ՝ ***դեռահասների մոտ դպրոցական բռնությունն առաջացնում է նույնականության խանգարումներ:*** Երկարատև սթրեսը ծնում է հուսահատության

և անելանելիության զգացում, ինչը կարող է քայքայիչ մտքերի պատճառ հանդիսանալ: Բուլինգի դրսևորման մեխանիզմները տարբեր են: Ուստի, խնդրի կարգավորումը պահանջում է համալիր մոտեցում ոչ միայն դպրոցի, այլև շահագրգիռ բոլոր կառույցների կողմից, հետևապես դպրոցներում երևույթի կանխարգելման հարցում կարելի է կիրառել մի շարք մեթոդներ՝ ելնելով իրավիճակից:

Այսպես՝

- Երեխաներին թույլ չտալ շփման փոքր շրջան ձեռք բերել և ամրապնդել:
- Ըստ իս, հրաշալի լուծում են հանդիսանում խմբային աշխատանքները, որոնք նպաստում են ,որ չշփվող երեխան չչարարանա այլոց հանդեպ, տվյալ միջավայրում չզգա իրեն միայնակ :
- Ընդունել բուլինգի կանխարգելման համապատասխան օրենսդրություն և կիրառել:
- Ուսուցիչների կողմից կարևորվում է բուլերի հետ ուղղակի աշխատանքը՝ նրա գիտակցությանը հասցնել յուրաքանչյուր երեխայի իրավահավասարության ու արդարության գաղափարը:
- Երեխաների շրջանում նկատելով բուլինգի դրսևորումները փորձել զրույցի, անձնական օրինակի, սերմանել հանդուրժողականություն, բարություն:
- Նպաստել բոնության ենթարկված աշակերտների ինքնագնահատականի բարձրացմանը:
- Կիրառել միջազգային փորձը (ԱՄՆ, Նորվեգիա, Կոլումբիա, Մոնտանա, Հյուսիսային Դակոտա, Հարավային Դակոտա և այլն)[9]՝ աշակերտների ուշադրությունը հրավիրելով նշյալ բացասական երևույթի վրա:
- Կազմակերպել համատեղ միջոցառումներ, որոնք կնպաստեն երկու կողմերի միջանձնային հարաբերությունների վերաիմաստավորմանն ու փոխճանաչմանը:
- Խնդրին առնչվող մասնագետների՝ հոգեբանի, սոցիալմանկավարժի, սոցիալական աշխատողի, ներգրավում և համագործակցության ապահովում:

[9]Новикова М. А., Реан А. А., Влияние школьного климата на возникновение травли: отечественный и зарубежный опыт исследования, Вопросы образования, 2019, N2,, էջ 78-89

> Ֆիլմերի ցուցադրում, գրական ստեղծագործությունների համատեղ քննարկում:

> Երեխային ցույց տալ, որ նա սիրված է, նշել նրա դրական հատկանիշները:

> Երեխային սովորեցնել ծիծաղել սեփական սխալների վրա:

> Հատուկ աշխատանք կազմակերպել ծնողական համայնքի հետ:

> Բուլինգի զոհերը երբեմն պետք է տեղափոխվեն թերապիայի՝ հարձակման արդյունքում մնացած հոգեբանական հետքերը բուժելու նպատակով:

Բուլինգը ի տարբերություն վեճի կամ կռիվների ունի ընդգծված առանձնահատկություններ.

1/ Կանոնավոր կրկնությունը ժամանակի ընթացքում:

2/ Բուլինգի մասնակիցները սովորաբար ներկայացնում են նույն սոցիալական խումբը:

Բուլինգի տեսակներից հաճախ հանդիպում է ֆիզիկական բռնությունը՝ ծեծը, նվաստացումը, ունեցվածքի հափշտակումը, իրերը վնասելը: Երկրորդ տեղում անուղղակի բուլինգն է, որը դրսևորվում է հոգեբանորեն և բանավոր՝ բամբասանքներ, շշուկներ, շահագործում, բոյկոտներ: Բուլինգի երրորդ տեսակը՝ կիբեռբուլինգն է, որն հետապնդում է հեռախոսի կամ սոցիալական ցանցերի միջոցով: Ըստ վիճակագրական տվյալների, գիտական գրականության մեջ նկարագրված է այն, որ.

- Ֆիզիկական բռնությունը տեղի է ունենում հիմնականում տարրական դպրոցում, իսկ անուղղակի հետապնդումներն հաճախակի հանդիպում են միջին և ավագ դպրոցում:

- Տղաներն ավելի շատ են ենթարկվում բուլինգի, քանի որ հենց տղաներն են դառնում ֆիզիկական բռնության զոհ, նրանց իրերն են վնասում, գողանում:

- Աղջիկներն հիմնականում ենթարկվում են անուղղակի բուլինգի՝ բամբասանքների, տգեղ ժեստերի:

Այսօր արդեն բավականին շատ են կիբեռբուլինգի դրսևորումները դպրոցականների շրջանում, որն կապված է նոր տեխնոլոգիաների զարգացման հետ:

Եզրակացություն

Այսպիսով, մեծամասնությունից չնչին տարբերություն ունեցող երեխաներից շատերը կյանքի ինչ-որ փուլում ենթարկվում են բուլինգի:

Հետևաբար, բուլինգի կանխարգելման համար լավագույն միջոց է հանդիսանում առողջ մթնոլորտում ուժեղ կամքով, ինքնավստահ, հավասարակշռված և ամուր հոգեբանությամբ երեխայի դաստիարակումը:

Այսպիսով՝ երեխաների սոցիալական պաշտպանության և արդարության հիմնախնդիրը արդիական է բոլոր ժամանակներում, որը հնարավորություն կտա բոլոր երեխաներին մասնակցելու սոցիալական կյանքին որպես արժանի, հարգված և իրենց ներդրումն ունեցած անձանց: Թեպետ Հայաստանի Հանրապետությունում դեռևս խնդրին օրենսդրական լուծում տրված չէ, բայց, միևնույն է, հասարակությունը մերժողական վերաբերմունք ունի երևույթի նկատմամբ:

Այսպես, դպրոցում դեռ վաղ տարիքից ձևավորվող միջանձնային փոխհարաբերությունների մոդելները անմիջական ազդեցությունն են ունենում հետագայում տվյալ երկրի հասարակական կառուցվածքի և դրա հանրային ընկալման վրա : Ոստի պատահական չէ, որ տարբեր երկրներում իշխանությունները հաճախ ձգտում են իրականացնել այնպիսի կրթական ծրագրեր, որոնք ոչ միայն ժամանակի պահանջն են, այլև արտահայտում են գործող իշխանության շահերը, համապատասխանում իշխող քաղաքական ուժի տեսլականին ու ռազմավարությանը: Հայաստանի Հանրապետությունն ևս անմասն չէ այդ գործընթացներից, ուր համակարգային կողմնորոշում ձևավորելը մանկավարժության համար դառնում է լրջագույն խնդիր: Այս տեսանկյունից որպես կարևորագույն խնդիր կարևորել ու քննարկել ենք կրթության համակարգում սովորողների սոցիալական պաշտպանության, սոցիալական անհավասարության դրսևորումների պատճառները՝ առաջարկելով դրանց կանխարգելման ու վերացման նորովի մոտեցումներ:

Ժամանակակից դպրոցում ձևավորվող սոցիալական պաշտպանության ու սոցիալական գիտակցության վրա ազդող գործոնների շրջանակը ընդգրկուն է՝ ներառելով ինչպես երեխաների սոցիալական տարբեր կարգավիճակները,

անհավասար ֆիզիկական ու մտավոր հնարավորությունները, օտարածին մշակութային բարքերը, այնպես էլ ուսուցիչների մանկավարժական պատրաստվածությունը, հատկապես տարիքային մանկավարժության և հոգեբանության վերաբերյալ գիտելիքների մակարդակը, կարծրատիպային մոտեցումները և այլն:Բուլինգը թիրախավորված ճնշման ձև է, որը բացասաբար է ազդում երեխայի զարգացման վրա: Այն կարող է տեղի ունենալ ցանկացած խմբում, սակայն առավել վտանգավոր է դեռահաս դպրոցականների շրջանում: Դրսևորումներն ու շարժառիթները տարբեր են, սակայն հետևանքները նույնն են. խեղվում է բուլինգի ենթարկված երեխայի անձի ձևավորման և սոցիալականացման գործընթացը:

Հայաստանում դեռևս չկա համապատասխան օրենսդրություն խնդրի կարգավորման գործում: Ավելին, բուլինգը հաճախ չի դիտարկվում որպես խնդիր, այլ համարվում է բնականոն, նորմալ երևույթ՝ կապվելով դեռահասության տարիքի ճգնաժամի և հույզերը չկառավարելու հետ:

Ուստի առաջարկվում է.

- Ոչ միայն իրականացվի խնդրի համապարփակ ուսումնասիրություն, այլև կատարվի համապատասխան օրենսդրության ապահովում:
- Մի շարք երկրների փորձի ուսումնասիրությաւն հիման վրա կիրառվեն լավագույն մոտեցումները:

Ժամանակակից դպրոցի առանցքային խնդիրներից մեկը ոչ միայն կրթության բարձր որակի ապահովումն է, այլև գիտակից ու հանդուրժող այնպիսի քաղաքացու դաստիարակումը, ով հարգում է ուրիշի իրավունքներն ու շրջապատի մարդկանց ընդունում այնպիսին, ինչպիսին որ կան:

Օգտագործված գրականության ցանկ

1. Խաչատրյան Ռ., Կարաբեկյան Ս., Բուդաղյան Ա. և ուրիշներ, Մարդկային ռեսուսների կառավարումը բարձրագույն ուսումնական հաստատություններում, Երևան, 2015, էջ 479:
2. Борисова Л. Г., Мониторинг школьных конфликтов: причины, выводы, рекоменда- ции//Педагогические технологии, 2005, N 1, с. 57-71.
3. Бочавер А. А., Жилинская А. В., Школьная травля и позиция учителей//Социальная психология и общество, Т. 6, N 1, 2015. с. 103-113,
4. Бочавер А. А., Хломов К. Д., Кибербуллинг: травля в пространстве современных технологий//Психология. Журнал высшей школы экономики, Т. 11, N3, с. 177-191.
5. Дахин А. Н., Буллинг в школе и не только..., Сибирский педагогический журнал, N6, 2015, с. 208-214.
6. Новикова М. А., Реан А. А., Влияние школьного климата на возникновение травли: отечественный и зарубежный опыт исследования, Вопросы образования/Educational- Studies.Moscow, 2019, N2, с. 78-89.
7. Предотвращение насилия в образовательных организациях, Информационно-методическое пособие для руководителей и педагогических работников образовательных организаций, Барнаул, 2017, с. 21-22.